



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. հունվարին /վերլուծություն/

2003թ. հունվարին, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 3407 գործարքներ, որոնք 2002թ. հունվարի համեմատ աճել են 2.9%-ով, իսկ 2002թ դեկտեմբերի համեմատ նվազել՝ 39.5%-ով:

2003թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ



տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. հունվարին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1714 օտարման գործարքների 90.4%-ը կազմել են առուվաճառքները, 9.3%-ը նվիրատվությունները և 0.3%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

42.9%-ը արձանագրվել են Երևան քաղաքում, որի 65.7%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. հունվարին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.8%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 31.8%-ով: 2003թ. հունվարին, Երևան քաղաքում անշարժ գույքի 663 առուվաճառքի գործարքների 65.3%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2002թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 39.9%-ով, իսկ 2002թ. հունվարի համեմատ՝ 22.7%-ով:

2003թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. հունվարին համարժեք է 583 դրամի/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական և առաջարկվող միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հունվար 2003թ.	դեկտեմբեր 2002թ.	հունվար 2002թ.
Կենտրոն	200.0-800.0	336.9	328.0	245.0
Արաբկիր	150.0-520.0	232.2	219.0	148.0
Քանաքեռ-Զեյթուն	100.0-255.0	133.6	140.0	91.0
Նոր-Նորք	90.0-220.0	116.8	112.0	86.0
Ավան	90.0-180.0	107.5	96.0	82.0
Էրեբունի	80.0-300.0	122.0	128.0	85.0
Շենգավիթ	80.0-220.0	121.5	120.0	85.0
Դավթաշեն	100.0-210.0	131.2	121.0	87.0
Աջափնյակ	80.0-200.0	116.9	117.0	84.0
Մալաթիա-Սեբաստիա	90.0-220.0	118.0	112.0	86.0
Նուբարաշեն	40.0-100.0	48.2	57.0	37.0
<b>Երևան</b>	<b>40.0-800.0</b>	<b>144.1</b>	<b>140.9</b>	<b>101.5</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Շուկայական և կադաստրային գների հարաբերության, ինչպես նաև գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2003թ. հունվարին Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.3%, իսկ տարեկան աճը՝ 42.0%: Ամսեկան աճի առավել բարձր տոկոսաչափ է գրանցվել Դավթաշենում /8.4%/: Վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական գների աճման միտումը դեռևս շարունակվում է:

2003թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 273 բնակարաններ: 2003թ. հունվարին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հունվար 2003թ	դեկտեմբեր 2002թ	հունվար 2002թ
Արագածոտն	Աշտարակ	22.0-82.0	60.2	59.4	54.8
	Ապարան	18.0-58.0	26.7	23.6	22.9
	Թալին	15.0-45.0	22.5	21.5	18.5
Արարատ	Արտաշատ	26.0-78.0	51.8	51.0	48.8
	Մասիս	18.0-76.0	53.3	53.3	47.6
	Վեդի	22.0-55.0	29.1	28.2	26.4
	Արարատ	20.0-56.0	29.9	29.2	25.6
Արմավիր	Վաղարշապատ	21.0-92.0	69.6	65.6	51.7
	Արմավիր	20.0-67.0	40.9	40.9	37.4
	Մեծամոր	17.0-65.0	30.0	29.6	27.3
Գեղարքունիք	Սևան	18.0-60.0	30.0	29.6	27.3
	Գավառ	15.0-55.0	29.2	29.1	26.5
	Մարտունի	17.0-55.0	27.2	27.1	26.9
	Վարդենիս	10.0-31.0	16.4	16.2	14.6
Լոռի	Վանաձոր	20.0-80.0	59.1	59.0	56.3
	Ստեփանավան	21.6-60.0	29.5	28.5	28.5
	Սպիտակ	15.0-55.0	20.8	20.8	18.0
	Ալավերդի	13.0-40.0	24.3	23.9	21.8
	Տաշիր	11.5-30.0	18.3	18.0	15.7
Կոտայք	Արովյան	40.0-95.0	70.0	65.5	61.8
	Նոր Հաճն	15.0-70.0	48.5	41.9	37.2
	Բյուրեղավան	13.0-55.0	34.3	33.9	32.2
	Եղվարդ	28.0-65.0	39.0	38.6	35.1
	Հրազդան	18.0-50.0	29.0	28.7	25.7
	Ծաղկաձոր	21.0-95.0	72.5	71.5	64.8
	Չարենցավան	12.0-55.0	29.6	29.3	29.3
Շիրակ	Գյումրի	25.0-97.0	63.1	62.9	54.0
	Արթիկ	16.0-44.0	24.4	24.3	24.1
	Մարալիկ	11.0-52.0	22.3	22.1	20.0

Սյունիք	Գորիս	20.0-50.0	27.8	27.6	26.7
	Կապան	15.0-52.0	26.7	26.0	23.4
	Միսիսան	16.0-56.0	26.4	26.1	22.8
	Քաջարան	11.0-32.0	17.0	16.0	14.8
Վայոց Ձոր	Վայք	14.5-50.0	32.4	31.4	25.3
	Եղեգնաձոր	20.0-56.0	46.1	42.4	37.3
	Ջերմուկ	17.0-53.0	38.9	38.4	36.9
Տավուշ	Դիլիջան	15.0-55.0	33.9	33.9	32.2
	Իջևան	23.5-60.0	39.6	39.5	33.6
	Բերդ	15.0-53.0	27.9	27.6	26.2

Հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, 2003թ. հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը կազմել է 2.6% , իսկ տարեկանը՝ 12.6%:

2003թ. հունվարին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 244 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 63, մյուս մարզերում միասին վերցրած՝ 181: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 6.6%-ով, այդ թվում, Երևան քաղաքում նվազել է 6.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել է 11.7%-ով: 2002թ. դեկտեմբերի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 28.2%-ով, ընդ որում, Երևանում նվազել է 20.3%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 30.6%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. հունվարին անհատական բնակելի տների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հունվար 2003թ.	դեկտեմբեր 2003թ.	հունվար 2002թ.
Կենտրոն	200.0-840.0	340.0	311.0	263.0
Արաբկիր	160.0-540.0	235.0	210.0	149.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-270.0	136.0	137.0	92.0
Նորք-Մարաշ	180.0-640.0	275.0	261.0	206.0
Ավան	95.0-200.0	109.0	124.0	85.0
Էրեբունի	85.0-320.0	124.0	124.0	95.0
Շենգավիթ	85.0-240.0	123.0	121.0	90.0
Դավթաշեն	110.0-230.0	133.0	119.0	88.0
Աջափնյակ	85.0-220.0	118.0	117.0	87.0
Մալաթիա-Մեքաստիա	95.0-240.0	120.0	121.0	88.0
Նուբարաշեն	45.0-110.0	50.0	59.0	39.0
Միջինը Երևանում	45.0-840.0	160.3	154.9	116.5

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2003թ. հունվարին Երևանում անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 3.5%, իսկ տարեկան աճը՝ 37.5%: Վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ Երևանում անհատական բնակելի տների շուկայական գների աճման միտումը դեռևս շարունակվում է:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների վաճառքի /պայմանագրային/ և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. հունվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հունվար 2003թ	դեկտեմբեր 2002թ	հունվար 2002թ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	79.8	78.8	71.4
	Ապարան	20.0-43.0	36.5	35.1	32.4
	Թալին	15.0-32.0	26.7	26.2	21.2
Արարատ	Արտաշատ	28.0-70.0	60.2	59.7	54.8
	Մասիս	27.0-70.0	59.9	59.1	58.5
	Վեդի	25.0-58.0	34.7	34.1	32.8
	Արարատ	25.0-58.0	34.0	32.6	31.1
Արմավիր	Վաղարշապատ	50.0-100.0	69.6	66.2	60.5
	Արմավիր	35.0-85.0	48.4	46.8	43.7
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	35.3	34.9	32.1
	Գավառ	25.0-65.0	38.3	37.9	34.8
	Մարտունի	20.0-60.0	32.5	31.9	30.0
	Վարդենիս	15.0-39.0	19.7	19.6	18.3
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	64.6	62.6	58.0
	Ստեփանավան	20.0-50.0	31.5	31.2	30.2
	Սպիտակ	17.0-50.0	23.7	22.4	21.9
	Ալավերդի	18.0-48.0	25.9	23.8	19.2
	Տաշիր	15.0-33.0	18.8	18.5	16.7
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	88.8	87.4	83.1
	Նոր Հաճն	35.0-80.0	52.6	52.2	49.6
	Բյուրեղավան	15.0-50.0	36.2	36.0	33.9
	Եղվարդ	23.0-65.0	44.9	43.9	38.6
	Հրազդան	25.0-60.0	38.0	37.3	33.5
	Ծաղկաձոր	45.0-100.0	82.6	81.1	73.9
	Չարենցավան	25.0-50.0	36.4	32.1	30.4
Շիրակ	Գյումրի	40.0-100.0	85.7	84.4	73.6
	Արթիկ	18.0-60.0	26.0	26.0	25.0

	Մարալիկ	15.0-55.0	22.8	22.2	19.4
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.3	30.0	26.4
	Կապան	25.0-55.0	28.7	28.2	25.0
	Սիսիան	18.0-50.0	26.7	26.0	23.6
	Քաջարան	15.0-30.0	17.8	17.5	15.7
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	34.6	33.6	27.7
	Եղեգնաձոր	20.0-65.0	47.1	46.2	39.6
	Ջերմուկ	25.0-60.0	41.2	40.6	40.7
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	37.7	37.0	33.8
	Իջևան	30.0-70.0	39.7	39.6	36.5
	Բերդ	20.0-50.0	29.6	29.1	28.6

2003թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.3%, իսկ տարեկան աճը՝ մոտ 11.3% :

2003թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հողերի 431 օտարման գործարքներ /186.33 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 8.85հա/: Հողերի 185 օտարման գործարքներն /155.99հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 408-ը հանդիսացել են առուվաճառքի և 23-ը՝ նվիրատվության գործարքներ: Առուվաճառքի 13 գործարքներում /3.2%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձիք:

2003թ. հունվարին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 2.1 անգամ, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 32.4%-ով: Ընդ որում, 2003թ. հունվարին հողերի առուվաճառքներից 111-ն իրականացվել են աճուրդների միջոցով պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ, որտեղ 102 /7-ը՝ 0.43հա Երևանում/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ են, 8-ը /25.08 հա/՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ 1-ը՝ հասարակական կառուցապատման հողեր:

Ստորև ներկայացվել է 2003թ. հունվարին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄ Ը	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր				գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	10	0.60	17	1.95	0	0.00	21	1.95	11	4.34
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	15	39.80	7	0.92	0	0.00
Արարատ	6	15.00	4	0.40	0	0.00	80	22.68	10	0.96	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	21	19.98	8	0.74	1	0.12
Գեղարքունիք	1	10.00	0	0.00	2	3.30	1	0.30	10	1.15	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	15	14.40	7	1.23	0	0.00
Կոտայք	1	0.08	91	7.60	0	0.00	17	8.40	19	2.05	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	25	24.20	0	0.00	0	0.00

Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.26	2	0.17	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.24	2	0.13	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>8</b>	<b>25.08</b>	<b>105</b>	<b>8.60</b>	<b>19</b>	<b>5.25</b>	<b>176</b>	<b>130.26</b>	<b>86</b>	<b>9.30</b>	<b>12</b>	<b>4.46</b>

2003թ. հունվարին հանրապետությունում վաճառվել է 1 միավոր արդյունաբերական օբյեկտների հող Գեղարքունիքի մարզում /0.09 հա/ և 1 միավոր արդյունաբերական օբյեկտների հող Երևանում՝ 0.01հա /Էրեբունի համայնքում/:

2003թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 184 գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 8 և դատարանի վճիռով 1 գործարքներ, , որոնց պայմանագրային միջին գների վերլուծությունների արդյունքները, 1 հա մակերեսի հաշվարկով, ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի անվանումը /նախկին շրջան/	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						9	4.48	1028.0	7300.0	2300.0
Ապարան						4	0.78	130.0	500.0	380.0
Թալին						2	34.53	200.0	1680.0	330.0
<b>Արարատի մարզ</b>										
Մասիս						18	4.00	730.0	3000.0	1000.0
Վեդի						26	9.23	710.0	7150.0	1150.0
Արտաշատ	6	15.0	133.3	213.0	198.0	36	9.45	1040.0	6000.0	2200.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Վաղարշապատ						9	3.74	980.0	9200.0	2000.0
Արմավիր						6	2.02	670.0	4600.0	1250.0
Բաղրամյան						5	13.48	130.0	1000.0	365.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	10.0	297.0	297.0	297.0					
Մարտունի						1	0.30	100.0	4000.0	475.0
<b>Լոռու մարզ</b>										
Ստեփանավան						6	5.87	180.0	4000.0	310.0
Տաշիր						9	8.53	50.0	400.0	260.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	1	0.08	1445.0	1445.0	1445.0	4	0.85	520.0	10000.0	3470.0
Եղվարդ						5	3.28	660.0	6000.0	1900.0
Հրազդան						8	4.27	250.0	900.0	670.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						25	24.19	550.0	750.0	620.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						1	0.26	370.0	3700.0	900.0
<b>Տավուշի մարզ</b>										
Իջևան						1	0.24	530.0	4000.0	1100.0

2003թ. հունվարին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 150 առուվաճառքների

գործարքներ ,որից աճուրդ-վաճառքների 95 գործարքներ: Առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված շուկայական գները, 1000.0քմ մակերեսի հաշվարկով, ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի ( նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						6	7050.0	120.0	3800.0	2300.0
Ապարան						1	2190.0	120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
<b>Արարատի մարզ</b>										
Մասիս						3	2650.0	280.0	3680.0	850.0
Վեդի						3	2630.0	120.0	1000.0	500.0
Արտաշատ	4	4000.0	180.0	231.0	205.0	4	4320.0	180.0	2460.0	655.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Վաղարշապատ						7	6430.0	280.0	3700.0	1330.0
Արմավիր						1	1000.0	180.0	2440.0	700.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Մարտունի						2	2380.0	120.0	320.0	220.0
Գավառ						6	5900.0	180.0	1000.0	520.0
Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ						2	3200.0	78.0	180.0	140.0
<b>Լոռու մարզ</b>										
Ստեփանավան								78.0	340.0	135.0
Գուգարք						7	12316.0	78.0	3800.0	580.0
Սպիտակ								120.0	450.0	160.0
Ալավերդի								78.0	440.0	200.0
Տաշիր								78.0	180.0	130.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	29	24825.0	95.0	160.00	112.0	10	9406.0	180.0	4300.0	1580.0
Եղվարդ	58	46400.0	296.0	296.0	296.0	5	6540.0	180.0	2670.0	2080.0
Հրազդան	4	4800.0	109.0	111.0	110.0	4	4550.0	180.0	4120.0	1330.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան								120.0	2500.0	450.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	130.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Միսիան								78.0	450.0	230.0
Գորիս								78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0



Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	1200.0	78.0	990.0	290.0
Վայք						1	500.0	78.0	1000.0	210.0
Տավուշի մարզ										
Իջևան						2	1250.0	78.0	1600.0	380.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Ընդ որում, մարզերի կտրվածքով հաշվարկված գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային միջին գներն ունեն բավականին մեծ փոփոխման միջակայքեր և հարաբերական շեղվածություն, որոնք հիմնականում պայմանավորվել են հողերի գտնվելու վայրերի և հողատեսքերի տարբերություններով:

Պետք է նշել, որ Երևան քաղաքում 2003թ. հունվարին գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի անհատույց տրամադրման 5 գործարքներ:

2003թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 329 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 29.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 43.0%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ 38.2%-ով:

2003թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 14 բնակարանների, 8 բնակելի տների, 70 հասարակական, 9 արտադրական նշանակության օբյեկտների և 227 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. հունվարին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 64 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. հունվարի համեմատ, աճել է 36.2%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ 14.3%-ով:

2003թ. հունվարին հանրապետությունում վարձակալվել են 1360.89 հա ընդհանուր մակերեսով հողեր, որից 8.31 հա՝ Երևանում: Մարզերում, բացառությամբ Երևանը, վարձակալված հողերից 1286.39 հա հանդիսացել են գյուղատնտեսական /որից 170.00 հա նախկինում պահուստային/, 61.19 հա՝ բնակավայրերի, 5.00 հա՝ արդյունաբերական օբյեկտների հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. հունվարին մարզերի համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	6	27.61
Արարատ	0	0.00	20	83.20
Արմավիր	0	0.00	1	0.30
Գեղարքունիք	8	637.00	8	76.0

Լոռի	0	0.00	14	13.64
Կոտայք	0	0.00	64	252.53
Շիրակ	0	0.00	9	39.50
Սյունիք	0	0.00	3	23.00
Ծայրց Ձոր	0	0.00	7	124.61
Կավուշ	0	0.00	2	9.0
<b>Ընդամենը</b>	<b>8</b>	<b>637.00</b>	<b>134</b>	<b>649.39</b>

2003թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 156 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 62.0%-ով, իսկ 2002թ. հունվարի համեմատ աճել է 62.5%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 55.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /39.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /27.6%/, առանձնատների /15.4%/ և հողերի /9.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 91 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. հունվարի համեմատ, աճել է 40.0%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 52.8%-ով:

2003թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել է 8.63 հա մակերեսով հողեր, որից 8.29 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 4.33 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2003թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 17 և 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.6 %:

2002թ. հունվարի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 15.8%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 12.0%-ով: 2003թ. հունվարին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Լոռու մարզում՝ 18.2% /2002 դեկտեմբերին՝ Երևանում և Սյունիքի մարզում՝ 20.0-ական %/:

2003թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 487 գործարքներ, որոնց քանակը, 2002թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 45.7%-ով, իսկ 2002թ. հունվարի համեմատ՝ աճել է 4.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.3%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.6%/:

## **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**